



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

---- սեպտեմբերի 2018 թվականի №----Ա
ք.Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի №105Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի սեպտեմբերի 7-ի և սեպտեմբերի 12-ի գրություններով «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով վեց ամիս ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի №105Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0601 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) համաձայն Ընկերության դիմումին կից ներկայացված «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային կայանում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկանքի՝ ամբողջությամբ տեղակայվել է արևային վահանակները և փոխակերպիչները, իրականացվել են բաշխման ցանցի միացման աշխատանքները, կառուցվել տրանսֆորմարտային ենթակայանը, մինևույն ժամանակ Ընկերությունը տեղեկացնում է, որ չի կարողանում ՀՀ էներգետիկայի պետական տեսչությունից ստանալ կայանի գործարկման եզրակացությունը, որի հետևանքով գործարկման աշխատանքները հետաձգվում են,

գ) Գրություններով Ընկերությունը չի հիմնավորել «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային կայանի գործարկման եզրակացության չստանալը,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Վեց ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N°105Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N°0601 լիցենզիայով ամրագրված արևային կայանի կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի մարտի 30-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ N°0601 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
 - 1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի մայիսի 10-ի Թիվ 01-621 գրությամբ Հանձնաժողով ներկայացված թիվ 184407619 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր քառասուներկու հազար դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
 - 2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2019 թվականի մայիսի 14-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի սեպտեմբերի 30-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ